


1.2 Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2004թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ 1901 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 155820.9 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 155102.7 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 13478.7 մլն. դրամի, այլ երկրներում՝ 41053.1 մլն. դրամի արտադրանք:

2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 107.1%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 108.0%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2002թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան

(%)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2003 թ.			
հունվար	78.9	109.9	78.9
փետրվար	99.1	105.7	78.2
մարտ	105.5	115.5	82.5
ապրիլ	94.9	126.2	78.3
մայիս	96.4	136.0	75.5
հունիս	117.6	119.7	88.8
հուլիս	97.9	110.5	86.9
օգոստոս	103.4	127.7	89.9
սեպտեմբեր	107.2	129.4	96.4
հոկտեմբեր	102.8	108.5	99.1
նոյեմբեր	84.5	109.0	83.7
դեկտեմբեր	109.2	91.3	91.4
2004 թ.			
հունվար	81.6	91.1	81.6
փետրվար	102.6	98.1	83.7
մարտ	120.1	111.3	100.5
ապրիլ	96.9	119.3	97.4



Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների¹

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	2004թ. հունվար-ապրիլին, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ (համադրելի գներով), %
Ամբողջ արդյունաբերությունը	155820.9	155102.7	107.1
<i>այդ թվում՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	34892.4	34892.4	102.7
<i>դրանից՝</i>			
էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	33244.9	33244.9	105.6
<i>որից՝</i>			
էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	29465.9	29465.9	104.9
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	3779.0	3779.0	111.7
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	1647.5	1647.5	66.1
հանքագործական արդյունաբերություն	23736.0	17972.4	104.2
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	23249.3	17482.4	104.1
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	486.7	490.0	108.0
մշակող արդյունաբերություն	97192.5	102237.9	108.7
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	50960.2	53878.0	110.2
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	3592.1	3967.6	103.2
մանածագործական արտադրություն	649.3	592.3	197.8
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	660.2	645.5	163.0
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	76.2	75.8	138.4
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	294.5	302.0	79.6
հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում	1923.2	1811.0	131.8
քիմիական արդյունաբերություն	4732.9	3687.6	3.9 անգամ
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	605.9	516.7	164.7
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	4106.7	3716.2	171.7
մետաղագործական արդյունաբերություն	16976.0	19543.1	96.2
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	800.8	835.3	75.8
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	1314.8	1966.5	106.7
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	6489.5	6619.2	97.1
գործունեության այլ տեսակներ	4010.2	4081.1	116.3



¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:



Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2004թ. հունվար-ապրիլին





Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում




Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում



Հանքագործական արդյունաբերություն



Մշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

2004թ. հունվար-ապրիլին արտադրված (հաշվառվող) 107 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 67-ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2003թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 59-ից 37-ի և սպառողական ապրանքների՝ 48-ից 30-ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները¹

(մլն. դրամ)

	Փաստացի թողարկումը		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2004թ.	2003թ. ²	
Սպառողական ապրանքներ, ընդամենը <i>այդ թվում՝</i>	62316.1	52930.7	117.7
պարենային ապրանքներ	34614.1	31931.1	108.4
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	13991.1	10861.7	128.8
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը <i>այդ թվում՝</i>	13710.9	10137.9	135.2
թեթև արդյունաբերության ³	4305.3	2475.7	173.9
մշակութային և տնտեսական նշանակության	9405.6	7662.2	122.8

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

² 2003թ. սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2004թ. գներով:

³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց հասնար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Սննդամթերք, ներառյալ խմիչքները և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները¹

	2004 թ. հունվար-ապրիլ	2003 թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլը 2003 թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Միս ² , տոննա	11911	10635	112.0
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ² , տոննա	57382	49971	114.8
Պանիր ² , տոննա	1393.3	1351.9	103.1
Սառնաքիչ, ներառյալ երշիկեղեն, տոննա	303.0	390.7	77.6
Պաղպաղակ, տոննա	233.5	160.2	145.8
Պահածո, տոննա	82.6	261.7	31.6
Ալյուր, տոննա	48549	46687	104.0
Չավարեղեն, տոննա	-	8.1	-
Հաց և հացամթերք, հազ. տոննա	97.9	97.9	100.0
Հրուշակեղեն, տոննա	1102.6	1373.5	80.3
Սակարոնեղեն, տոննա	643.8	396.8	162.2
Բուսական յուղ, տոննա	249.0	252.8	98.5
Օղի և օղու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր	3059.1	2704.2	113.1
Կոնյակ, հազ. լիտր	2372.6	2083.3	113.9
Խաղողի գինի, հազ. լիտր	844.8	633.0	133.5
Շամպայն գինի, հազ.լիտր	89.0	132.3	67.3
Գարեջուր, հազ. լիտր	1776.4	1249.7	142.1
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	8249.0	7745.3	106.5
Բնական հյութեր, հազ.լիտր	1434.6	1254.2	114.4
Հանքային ջրեր, հազ. լիտր	5693.8	5773.1	98.6
Աղ, տոննա	8514.4	8522.9	99.9
Սիգարետներ, մլն. հատ	669.5	718.4	93.2
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	390.3	861.5	45.3

Սանձագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2004 թ. հունվար-ապրիլ	2003 թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլը 2003 թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	47.7	74.0	64.5
Գորգեր և գորգեղեն, մ ²	9282	5408	171.6
Գուլպեղեն, հազ. զույգ	68.5	90.5	75.7
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	463.3	995.1	47.2
Կարի արտադրանք ³ , մլն. դրամ	3199.2	1909.0	167.6

2004թ. հունվար-ապրիլին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից լաքաներկանյութերի արտադրությունը 2003թ. հունվար-ապրիլի համեմատ ավելացել է 40.1%-ով, քիմիկաղեղագործական արտադրանքինը՝ 33.4%-ով, իսկ պլաստմասսայից իրերի և լվացող և մաքրող միջոցների արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 17.5 և 1.3%-ով:

¹ Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):

² Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

³ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2004թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	4876	4674	104.3
Ապրանքային բետոն, մ ³	12058	10103	119.4
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	32444	11086	2.9 անգամ
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	66866	44510	150.2
Կիր, տոննա	105.0	-	-
Ցեմենտ, հազ. տոննա	103.0	69.9	147.4
Գաջ, տոննա	11268	8800	128.0
Ուղիղ կտրվածքի տուֆ, մ ³	8991	6293	142.9
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	13439	16087	83.5
Այրումիներ և մետաղապլաստիկ իրեր, մ ²	16783	8436	198.9

Մետաղագործական արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2004թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ այրումիներ գլանվածքի արտադրությունն ավելացել է 30.9 անգամ, ցինկի խտանյութինը՝ 12.7%-ով, մոլիբդենի խտանյութինը՝ 6.6 -ով, իսկ պղնձե խտանյութում պղնձի և կոնվերտորային պղնձի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 10.4 և 1.5%-ով:

Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2004 թ. հունվար-ապրիլ	2003 թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլը 2003 թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	104	104	100.0
Ռելեներ, հազ. հատ	102.7	80.6	127.4
Ուժային ճկուն կաբելներ, կմ	1.9	0.6	3.2 անգամ
Տեղակայման հաղորդալարեր, կմ	42.1	13.6	3.1 անգամ
Էմալապատ լարեր և փաթութալարեր, տոննա	6.5	13.0	50.0
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	-	2872.7	-
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	2355	157	15 անգամ
Ուժային տրանսֆորմատորներ, հատ	116	13	8.9 անգամ
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	171	128	133.6
Համակարգիչներ, հատ	556	805	69.1
Ջրային հաշվիչներ, հատ	229	70321	0.3
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	42	19	2.2 անգամ
Պոմպեր, հատ	215	709	30.3

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունվար-ապրիլին հանրապետությունում թողարկվել է 2217.5 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2003թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 110.4%-ը: Ընդ որում, ՀԱԷԿ-ում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 64.5%, ՀԷԿ-երում՝ 11.4% -ով, իսկ ՋԷԿ-երում նվազել 27.8% -ով:

2004թ. հունվար-ապրիլին ՀԱԷԿ-ը թողարկել է 951.9 մլն. կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 42.9% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 600.9 մլն. կվտ ժամ և 27.1%-ը, ՀԷԿ-երը՝ 664.7 մլն. կվտ ժամ և 30.0%-ը: 2004թ. հունվար-ապրիլին հանրապետությունում թողարկվել է 237.0 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2003թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 107.5%: